

Այս Յանդիմանագրին մէջ (տես թոր. Աղբ. Բ., էջ 288) Գր. Վ. Կեսարացի կը գրէ, թէ Ջաքարիա Վ. Վանայ Առաջնորդ եղած միջոցին արդէն կաթողիկէ էր, եւ այն պատճառաւ նաեւ ժողովուրդը զինք մերժեց Վարագայ աթոռէն. իսկ Մելքիսեդ Կաթողիկոս զանիկայ իրեն Աթոռակալ եւ յետոյ Նուիրակ կարգեց, թէ նոյն ինքն Մելքիսեդ Կաթողիկոսը Հռոմ հպատակութեան եւ դաւանութեան թուղթ գրեց եւ Ջաքարիայի ձեռօք ղրկեց, քահանայապետն ալ զայն տպագրել տուաւ եւ ղրկեց Լեհաստանի եւ ուրիշ երկիրներու Հայերուն. «այս գրոյս մէկն ի Համիթ է եկեր, եւ զնորա մէկ օրինակն Աւետիս Կաթողիկոսն է տարեր ի հետն, եւ զմի օրինակն Համթեցիքս մեզ էին յղրկել» կ'ըսէ Գր. Կեսարացի:

Հռոմի Բրոքականտայի մատենադարանը պահուած այս Յանդիմանագրին ետեւը կայ նաեւ Մովսէս Վ.ի՝ Գր. Կեսարացոյ աշակերտին նամակն առ նոյն Կեսարացին, որմէ կ'իմացուի թէ Մովսէս Վ. ընդունեց է Յանդիմանագիրն, որչափ կ'երեւայ, Նոր Զուղայի մէջ, եւ Թումա Եպիսկոպոսի, Տաթեւու երկու Եպիսկոպոսներուն եւ իշխանաց առջեւ կարդացեր է: Մովսէս Վ.ի սոյն նամակը գրուած է 19 Սեպտ. 1615ին: Ասոր մէջ կ'ըսէ Մովս. Վ. թէ նամակը բերեր է Ասլան՝ յԱնապատ, Օգոստ. 27ին, իրենք կրօնաւորներ կարդացեր են, յետոյ Ս. Խաչին նաւակատիք եղեր է նորակերտ եկեղեցւոյն, զոր շիներ է Հայկազ իշ-